ծում ենք, զգում ենք ոգևորված ժամանակներում, կամ երբ ոգելից ըմպելիները բաց են անում մեր բարի զգացմունքների դուռը. մեր միտքն են գալիս ազգութիւն, հայրենիք ասած բաները: Մէկը առաջարկում է, «խմենք Ներսէսի կենացը», միւսը «խմենք Հայրիկի կենացը»: Այդ շատ ճշմարիտ է, որ մենք շատ ազնիւ բաների կենացը միայն խմում ենք, կամ յիշում ենք խմելիս միայն. իսկ Խրիմեանը, Ներսէսը, կամ ազգը ինչ է շահվում դորանից, քանի որ ոգևորող գաղերը մեզանից հեռանալով, մենք մնում ենք նոյն հին մարդը, միշտ սպառող ու թշնամի իւր սեփական զօրութեան:

Ցանելի կ'լինէր, եթէ ձեզանից դուրս գար մէկը, խլէր ինձանից այս ամբիոնը և ներկայացնէր իմ նկարած պատկերի հակապատկերը. այսինքն ստէր իմ խօսքերը, ցոյց տար, որ կայ ընդհանրութիւն, որ մտածում է, գործում է անհատների համար, և անհատներ, որոնք ապրում են ընդհանրութեան համար: Կան հաստատված հիմնարկութիւններ, գիտութեան համար թանգարաններ, ընթերցարաններ, սովի դէմ շտեմարաններ. աղքատութեան, թշուառութեան դէմ բարեգործական հաստատութիւններ. տգիտութեան դէմ ուսումնարաններ, որոնցից դուրս են գալիս ոչ թէ ապուշներ կամ գրագիրներ, այլ կատարեալ մարդիկ հաստատահիմ սկզբունքներով: Կան ընտանեկան այնպիսի բարձր շրջաններ, որոնք զարգա-